

ԲԱՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ  
 Պուշխարիոյ համար  
 Տարեկան 10 Ֆր.  
 Վեցամսեայ 5 »  
 Արտասահմանի հա-  
 մար տարեկան 12 »  
 Վեցամսեայ 6 »  
 ԿԱՆԻՒԿ ՎՃԱՐՆԷԼԻ  
 —)(—  
 Գրութիւնք եւ չնկ տրուիր  
 —)(—  
 Իրանացիական տողը 20 սան-  
 քիսէ կ. երեկոն աւելի ան-  
 գամներու համար 20 Օ/0  
 գնդը կըլայ :

# ՇՆԱԲԹ

Նամակ եւ դրամ դրկէ  
 Խմբագրութեան հասցին.

Редакция на вѣстникъ  
 «Шаржумъ»  
 Варна.  
 Redaction du journal  
 «Charjoum»  
 Varna (Bulgarie).

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇՆԱԲԹ ՕՐԵՐԸ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ.  
 АДВОКАТЪ

## ԱԳՈՒԱԻՆԵՐ

—)(—

Այս վերջին թիւին քրո-  
 նիկին մէջ երկտողով մը ծանու-  
 ցինք թէ վանայ կլորդար թաղի  
 բնակիչներէն հարիւր տունի մօտ  
 դաւանափոխ եղեր են . . . անօթի  
 չմեռնելու համար : Իրաւ , հին  
 յանկերգն է աս . բայց հին ըլ-  
 լալուն համար աս խնդիրը բնա-  
 չի մեռնիր ցորչափ հայութիւնը  
 կանգուն կենայ , ցորչափ գտնուի  
 հայ լրագիր մը որ պաշտպանէ  
 իր ազգին գոյութեան պայման-  
 ները , անոր դաւանանքն ու ա-  
 նոր սրբազան աւանդութիւննե-  
 րը :

Կրկնակ է մեր պայքարը . մէյ  
 մը պարտաւորուած ենք մաքա-  
 ռի մեր ուխտեալ թշնամիին՝  
 տաճկին դէմ . մէյ մըն ալ , մար-  
 դասիրութեան խաբող , շլացնող  
 պատմաճանող մեր մէջ սպլգած  
 օտար վարդապետներուն , ճիւղ-  
 ուիղներուն դէմ :

Առաջին թշնամիին դէմ մեր  
 կռուելու միջոցները յայտնի ,  
 պայծառ են . արեան կռիւ մըն է  
 արդէն , որ ան ատեն պիտի վեր-  
 ջանայ երբ երկուքէս մէկը փը-  
 ճանանք օրին մէկը : Ասիկա ճա-  
 կատագրական բան է . վճռուած  
 լմնցած է :

Բայց միւս թշնամին գոյու-  
 թեան ու է իրաւունք չունի .  
 բացէն , հեռուանց կուգայ՝ նա-  
 զանքով , քաղցրիկ ժպիտներով ,  
 ճիշդ ան մարդուն պէս որ հետ  
 մանկան մը մօտենալու համար  
 շաքարի կտոր մը կը քսէ անոր  
 շրթունքներուն :

Իր կրօնքին , իր լեզուին ու իր  
 աւանդութիւններուն սիրուն հա-  
 մար մեռնող հայը միթիթարու-  
 թիւն մըն է գէթ ետեւը մնա-  
 ցողներուն , ասոր մէջ զոհողու-  
 թեան , ողջակիզումի սրբութիւնը  
 կայ , որ անմուսաց յիշատակի  
 դրօշմը կը կրէ : Բայց խաբուե-  
 լով , հրապուրուելով իր ազգին  
 բունէն անշատուող էակը՝ ան բու-  
 պէին իսկ կը մեռնի , տկարու-  
 թեան , արգահատանքի երկար

հետք մը ձգելով , որ պօքանք  
 կազդէ :

Վանի կլորդար թաղին 80  
 տուն հայերուն կրօնքը գողցող  
 սոմինիկեան կնզղաւորներուն  
 դէմ բացարձակապէս զէնք չու-  
 նինք կռուելու . անոնց դէմ  
 ալ զատ յեղափոխութիւն մը  
 կազմակերպենք : Եւ ապացու-  
 ցանելու համար թէ ատ սեւ-  
 սիրտ սեւագլուխները ինչ կա-  
 տաղութեամբ յարձակած են մեր  
 խեղճուլալիկ ազգակիցներուն  
 կրօնքին ու ազգային եկեղեցի-  
 ին վրայ , կը բաւէ յիշատակել  
 սա պարագան թէ նոյն թաղը  
 բնակող թուրքերը բողբեր են  
 ան բունական միջոցներուն դէմ  
 որոնցմով սոմինիկեանները ի-  
 րենց նոր բացած եկեղեցին  
 կը քշեն կը տանին եղեր ատ ա-  
 նօթի ծարաւ կրօնափոխները :  
 Երբ բունութեան մը համար տա-  
 ճիկը բողբող կըլլայ , ա՛լ  
 մեղ կը մնայ երեսակայել թէ  
 սատանին բերանը երթալիք ատ  
 կրօնաւորները ինչ անխղճու-  
 թեամբ կը վարուին մեր ան-  
 սուազ , գիտակցութիւն ու ինք-  
 նաճանաչութիւն կորսնցուցած  
 տարաբախտ արեւակիցներուն  
 հետ :

Ես աս մարդիկը կը նմանցնեմ  
 անօթի ագուաներու որոնք դի-  
 ակներու վրայ կիջնան իրենց  
 որդալից որովայնին անյագու-  
 թիւնը կշտացնելու համար , եւ  
 հիմա ինչ հրճուանքով կը խայ-  
 տան արդեօք աս սեւափետուր  
 թռչունները , տանելով նորանոր  
 պարարտ որսերու ժամանումը ի-  
 րենց լափող կտուցին տակ՝  
 Ռուսիայէն և ուրիշ տեղերէ :

Վերագարձող հայերը նիւթա-  
 պէս նախանձելու բան մը չունին  
 հայրենիքի մէջ հեծող տանջը-  
 ւող իրենց հայրենակիցներէն .  
 աւելի խեղճ , աւելի անօթի են ,  
 և աւելի հեշտ որսեր պիտի  
 դառնան զիրենք հիւրընկալող  
 մարդիկներուն համար :

Հայր Շարմիթան Բարիղի մէջ  
 ամէն վայրկեան կը խորհի Հա-  
 յաստանի սովահարներուն վիճա-  
 կը ամօքելու . կոչում կընէ միշտ

աշխարհի մարդասիրական զգա-  
 ցումներուն . ու քիչ շատ կը յա-  
 ջուղի . երախտագիտութեան շատ  
 պարտքեր ունինք աս մարդասէր  
 կրօնաւորին :

Մենք ալ , սակայն , իր մար-  
 դասիրութեան կոչում կընենք ,  
 որպէսզի իր հեղինակութեամբը  
 վերջ մը դնել տայ ան աւեր-  
 մունքին որ գթութեան պատր-  
 ուակին տակ՝ կը գործուի մեր  
 անտիրական հայրենակիցներուն  
 մէջ :

Իոյրը աս ցաւագին բաները  
 կանցնին կերթան . դժբախտու-  
 թեան օրերուն երջանկութեան  
 օրեր կը յաջորդեն . ա՛լ հայը  
 կարօտ չըլլար օտարին հացին  
 ու գրամին . ան ատեն կարգը  
 կուգայ պատմութեան , անողք ,  
 աններող պատմութեան , որուն  
 մէջ սեւ , սե՛ փ սեւ տողերով կը  
 դժուի «մարդասիրութիւն» բառը ,  
 որ երախտագիտութեան տեղ ա-  
 նէ՛ ծք պիտի խլէ հայ սրտերէն :

ՇՆԱԲԹ

## ՀԱՅԱՍՏԱՆ ՍՈՎԱՏԱՆՁ

—)(—

Անցեալները ծանուցինք թէ  
 Հայաստանի սովախներուն հա-  
 մար մեր բացած հանգանակու-  
 թիւնը պիտի փակենք յուլիս  
 15ին : Այսպէս ընել որոշած  
 էինք , նկատելով որ նպաստե-  
 րը Քոլորովին դադարած էին ,  
 հակառակ մեր կրկնակի հրա-  
 ւէրներուն և մեր հայրենակից-  
 ներուն ողբալի կացութեան մա-  
 սին եղած նկարագրութիւննե-  
 րուն :

Սակայն , հետեւեալ ցուցակը  
 զոր կը հրատարակենք , կուգայ  
 նիւթականապէս ցոյց տալ մեզ  
 թէ մեր հայրենիքի ազգակից-  
 ներ բոլորովին մոռացութեան  
 շն մատնուած : Ֆիլիպպէի հայե-  
 րը իրենց նիւթական համեստ  
 աջակցութեամբ գրգիռ և օրի-  
 նակ կը հանդիսանան ուրիշ սե-  
 զերու հայոց , որոնք յուսով ենք  
 թէ պիտի փութան իրենց լու-  
 ման նուիրել Հայաստանի իրենց  
 տառապող հայրենակիցներուն

վիճակին սփոփմանը համար :  
 Հետեւապէս , նպաստելու յօժա-  
 րութիւն ունեցողներուն իբրեւ  
 միջոց ու դիւրութիւն , կը շա-  
 րունակենք ժամանակ մըն ալ  
 մեր հանգանակութիւնը , որ  
 յուսով ենք թէ արտասահմանի  
 և մասնաւորապէս Պուլկարիոյ և  
 Ռումանիոյ հայոց պատուաբեր  
 գումարի մը պիտի յանգի :

Յ.	Պ.	Լ. Ս.
Գ.	Թ.	5.—
Յակոբ	Երկանեան	5.—
Մանաս	Շահպաղեան	5.—
Միհրան	Թարաֆեան	5.—
Լեւոն	Միւսսեան	5.—
Ունն		3.—
Երեմ ընկերք		3.—
Յ.	Խ.	3.—
Գ.	Ֆ.	3.—
Ա.	Յ.	3.—
Գ.	Մ. Վ.	2.—
Թ.	Յակոբեան	2.—
Եղբարք		2.—
Կարապէտ	Մարտիրոսեան	2.—
Մ.	Խ.	1.50
Գեորգ	Մարաֆեան	1.30
Խաչիկ	Կիրակոսեան	1.—
Եղբարք	Դանիէլեան	1.—
Մարտիրոս	Թիրոյեան	1.—
Գ.	Մ.	1.—
Յարութիւն	Ալբրեկեան	—60
Հ.	Կ.	—60
Յովսէփ	Ֆերիկեանեան	—50
Սիւնն	Կարապէտեան	—50
Ասուր	Միւսսեան	—50
Մ.	Ա.	—50
Ը.	Գ.	—50
Գրիգոր	Թիրոյեան	—50
Տ.	Մ.	2.—
	Գումար	66.—
	Գումար վերջին ցուցակի	277.40
	Համագումար	343.40

## ԵՊԻՍԿՈՊՈՍՅՈՒՆԵՐ

—)(—

Ձատիկէն սաղին՝ պոլսական մա-  
 մուլն ու գաւառական լուրերը բա-  
 ւականապէս զբաղեցան եպիսկոպոս-  
 ցուներու խնդիրներով : Ամենէն ա-  
 ռաջ՝ Պատրիարքարանը իր քանտի-  
 տատները մէջ տեղը դրաւ . շրջակայ  
 գաւառներէն մէկ քանին ալ իրենց  
 վարդապետ առաջնորդը՝ եպիսկոպոսի  
 փառքով տեսնելու նախանձով վառ-  
 ուած , միջնորդեցին որ Պատրիար-  
 քարանը իր հաճութիւնը տայ : Իսկ

ԱՐՁԱԳԱՆԳ

—(—)

Իզմիրցիները, որոնք թերեւս, համամատարար, եպիսկոպոսական քանտիտատներու մէջ ամենէն լաւ առաջնորդը ունէին, ծայրայեղութեան դիմացին եւ ատով պատճառ տուին որ ուշադրութիւն դարձուի եպիսկոպոսներու վրայ:

Գիտողութեանց ծայրը բրդաւ: Բայց արդարաւէր պէտք է ըլլալ խոստովանելու որ ատարկութիւնները, մեծ մասամբ, խակ էին եւ կամ սեղմուած գուցէ անձնական նեղկուկ համակրանքներու մէջ: Օրինակի համար, երբ թղթակից մը Այվազեան Յովսէփ վարդապետի մասին կ'ըսէ խայթոցներ կը նետէր, քանի մը տող ետքը Ի. թիւեան Կէորդ վարդապետը յանձնարարելի կը ներ: Ուրիշ մը ներսէս Ասլանեանի գէմ իր գրելը կը սրէր, կէօմրիւք-ճեանը ծաղիկներով կը սրտակէր: Մէկդի կը թողում Գարբէլ վարդապետ Զէվարեանը, որ, ի քաւութիւն մեր բոլոր մեղքերուն, Պատր. Փոխանորդն էր, է ու կը մնայ 2,500 դահլիճ ամսականով, եւ գուցէ անոր համար որ Գարբէլ նորատուեկեանի մօր քրոջ որդին է:

Գանտխատներուն մէջ, ինչ ալ խօսուի, համեմատաբար, ամենէն լաւերն են՝ Ներսէս վարդապետ Արսլանեան եւ Յովսէփ վարդապետ Այվազեան: Առաջինը, նիհար, նրբահասակ, ջղուտ, իր կուսակրօն կեանքով գոնէ ամբասիր ճանչուած, իր պաշտօններուն մէջ տաք սիրտ եկեղեցական մը տեսնուած է: Կը խօսի ալ. ու բաւականապէս տաք կը խօսի. չեմ բեր թէ մեծ խոսող է: Անկեղծ ալ է. երբ հարկ է շնչտակի կը զարնէ իր ըմբռնած ճշմարտութեան թշնամին: Ապացոյցներ տուած է: Ու եթէ իզմիրցիները ունէին իրենց զիտողութիւնները, պէտք է տարիներով սպասէին իրենց առաջնորդին հովուական անտարբերութեանը մասին, որով երկու ծառայութիւն մէկանց մատուցած կը լլային, նախ վարդապետը չէր թմբեր անգործութեան ու անտարբերութեան մէջ, երկրորդ՝ իրենց թեմն ալ կ'օգտուէր Ասլանեանի տաքութեանէն: Հիմա, երկու վնասով մէկ ծառայութիւն մատուցին. — քննադատել եպիսկոպոսական քանտիտատները, եւ օրինակը կարծէ, մանաւանդ թէ աւելի պիտի արժէր, եթէ աւելի արդարաւէր վարուէին սկիզբէն ի վեր:

Այվազեան, միջին հասակով, քիչ մը լայնկեկ, ալ տարիքի վայրէջքին մէջ, ինկացի, բան հասկցող, աւելին տեսող է. իրեն հետ խաղալը բաւական դժուար է. թէ եւ ուրիշ հետ ալ խաղալու հետամուտ չէ: Իրեն համար թերեւս կարեւորն ըսել թէ չէ կրցած գերծ մնալ մարդկային այն տկարութիւններէն որոնք ընդակից են մեզի եւ շատ անգամ այնքան բուռն որ կրօնաւորի խաղաղասէր պատմութեան ալ չի դօրեր անոնց ուժին գէմ. եւ սակայն, ալ բան մը չունի անցեալէն, եւ տարիները, հրդեհի մը փոշիներուն պէս, առած տարած են ամէն յիշատակ, ամէն փշրանք, ու այսօր ունինք մարդ մը, որ իր ճերմակ մազերուն տակ կը պահէ ողջ ուղեղ մը, եւ շարժրկուած կուրծքին տակ ալ բաւական տաք սիրտ մը իր ժողովուրդին սիրուն պահուած. կը խօսի կանոնաւոր, կը գործէ կանոնաւոր, կը քայլէ գէպի նպատակը ու քիչ անգամ կը պատահի որ չը յայտնուի: Չէ, աննշան մէկը չէ. ու պէտք է գիտնալ թէ կերթայ ու գնաց ուր որ կոչեց զինքը ազգին ձայնը:

Բայց թէ եպիսկոպոսութիւնը, իրեն եկեղեցական բարձրագոյն պաշտօն, կարծէ որ սակէ հաջը որոշ արժանիքներու պահուի. — կը ծափնք գաղափարը, առանց կարեւոր երբեք մոռնալու թէ կրք, ձէվահիրճեանի պէս մարդու մը համար, պատրիարքարանի հաճութիւնը կը տրուի՝ զանի եպիսկոպոս ձեռնադրել տալու, այն ատենը թող ներքին որ ըսուի թէ պատր. փոխանորդութիւնը, գոնէ մինչեւ այսօր ըմբռնուած փոխանորդութիւնը, մեծ արժանիք մը չէ: Ընդ տեղն է յիշեցնել որ երբ կարին, ինք տարի տալ, Գէորդ վարդապետ Իւթիւճեանը ընտրեց իրրեւ առաջնորդ, այն գերազանց պատճառով որ Պատր. փոխանորդութիւնը ունէր, անոր ընդունելութեան առաջին օրն իսկ սոսկաց այդ խեղճ հոգեւորականի դարձակ մտքին ու հոգիին վրայ: Կէօմրիւքեանի եւ ուրիշներու համար ոչինչ կարծէ ըսել, առաջամէջքն ալ ջուրէն վար ու ջուր ի վեր փնտէ՛ ժողովրդական առածին համեմատ:

Կը մնայ հիմա չմոռնալ եպիսկոպոսներուն մէջ մէկը. եղիշէ վարդապետ Գուրբան: Անոր համար ոչ մէկ հակառակող կարծիք ազգին մէջ. ամէն միայն համաձայն է վարձարեւու այն մեծ արժանիքը որ ամէնէն գեղեցիկ զարդն է արքնասէր ճակարկն ու ներուճը ըզգելին:

Բայց թէ իրաւ բան մըն է եպիսկոպոսութիւնը եղիշէ վարդապետի համար: Եթէ կարեւոր ձայնս իրեն հասցնել, իմ բարեկամի ձայնս, որ երբեք անխորտակ չպիտի հնչէր իր ակտիւքին, պիտի խնդրէր որ նոյն իսկ ունեցած եկեղեցական աստիճաններէն ալ վար իջնար, իր վրայէն թափեր ատոնք ձուկի թեփու պէս, ու ինքը, միմիայն արեղայ վարդապետ, օրինակը տար թէ հոգեւորականները արժանիքով մեծ կրնան ըլլալ, ու եւ աստիճան որ հնարքներով կը փնտռուի ու վարպետութիւնով ձեռք կը բերուի, իսկապէս ոչինչ կարծէ: Ու որով մեզի գերագոյն տոնիթ մը կուտար հասկցնել թէ մենք ինչպէս մեր ուշադրութիւնը կը սրենք գէպի արժանիքը, որ այդամանդին պէս իր մէջ կամփոփէ իր շողերն ու սուր աչքերը կը համայնէ:

Ու ես բնաւ տարակոյս չունիմ հաւատալու թէ եղիշէ վարդապետ թերեւս ամենքէն աւելի լաւ ըմբռնած է որ եպիսկոպոսի մանիշակագոյն փիլոսոփա ու գաւազանը բան մը չեն արժէր իրեն, գուցէ շատ բան ալ պակասեցնեն իրմէն: Եպիսկոպոսութիւնը պատճառ պիտի տայ որ, էջմիածինէ դարձին, տունէ տուն հըրաւերին զինքը, ունեւոր մեռելներու զամբանականին կոչին, հարսնիքի հրաւեր զրկուի: Արդիւ՞նք. Եղիշէն պիտի զրկուի իր սիրական գրքերու ծոցէն ու վանքի ստուերներէն, ուր, անտարակոյս, իր խաղաղ հոգիին համար, աւելի շատ ու անխառն անուշութիւններ կան: Հայկի զիջագնի հեղինակը, Հովերտի թարգմանիչ Բագրատունին՝ վարդապետ սպրեցաւ ու վարդապետ մեռաւ. Դեռ ող Ալիշան վարդապետ կապրի ու վարդապետ պիտի մեռնի: Անարժանիքը թողէ՛ք եպիսկոպոսութիւնը, սիրելի՛ վարդապետ. թող ձէվահիրճեանի, Իւթիւճեանի, Կէօմրիւքեանի հոգեցնեն մանիշակագոյն փիլոսոփան, անոնց հոգիին ու մտքին խեղճութիւնը ծածկելու համար, ու գուցէ մեզի վարդապետ մնացէ՛ք, սոսկական վարդապետ:

ՇԱՒԱՍՊ

—(—)

Կասողն Տէշան «Թան»ի մէջ ֆրանսական ազգային տօնին առթիւ իր խոհանքները գրած է: Արդոյ գրագէտը այդ նշանակելի օրը Վօթ լեւանց մէջ Վիսամպալսանցուցած է տեղւոյն վրայ ըմբռնելու այն յուզերու, տրտմութեան և վրիժու զգացման դաւաժը որ յաւէտ պիտի մնայ ամէն ֆրանսացիի ձեռքին մէջ, շրթերուն վրայ, մինչեւ որ առեւանգուած չքնաղ աղջիկը, Ալիսաը, իր կարօտակէզ մօր գիրկը վերապառնայ:

Հոն՝ այն գծին վրայ, այն նշանաբարին առջեւ որ Deutsches Reich գրուած է, ֆրանսայի այդ զգայուն զաւակը, Կասողն Տէշան, մայառուտ թուփերու մէջ չէն ցանկութեան անյագ ակնարկ մը կը նետէ գերմանական հողին վրայ, տարփատենչիկ սիրահարի անհուն սիրոյ նայուածքով որ կը թափանցէ իր պաշտելին պարփակող անառիկ օրմերէն ներս:

Եւ Տէշան աղիքներուն խորէն սրտաշարժ առաջ մը կարճակէ ի տես այդ հունձքերով առլի ճոխ ձորերուն, այդ հասունցած խաւրին որ արեւին տակ կը ջերմանայ, առաններու զանգակատուններուն որոնք գէպ երկինք կը բարձրանան ծառերու գողտր փունջերուն մէջէն, բարունակներու և քլէմանթիտներու ստուերովը ժպտուն այդ անակներուն, անթիւ եղեւիններուն որոնք բարձրութեանց վրայ սիւնակածեւ շարուած՝ ստուերի և թարմութեան կամարներ կը կազմեն, վերջապէս այդ տժգոյն երկնակապոյտ հեռաւորութիւններուն վրայ որոնք ալ իրենցը չեն: Նոյնպէս անջատուած են իրենց մէջ այն մարդիկը որոնք իրենց պէս կը գան, իրենց պէս կը բարբառեն և որոնց սակայն, անիրաւ բունակալութեան մը կողմէն, արգիլուած է եղբայրութեան ձեռքը կարկառել:

Է՛յ, Պ. Տէշան, քու բոլոր հառաչանքներդ կը յարգեմ. որովհետեւ հետեւ չեմ երկրայի թէ ան՛կեղծ են անոնք: Բայց կը հաճի՞ք վայրկեան մը Բարիզէն հեռանալ, իմ հետ գալու համար իմ հայրենիք: Անոր մէկ եղբւրքին վրայ կենանք և քու մարդասէրի և իմ հայու աչքով մեր ակնարկները թափանցենք անոր խորքերուն մէջ: Կը կարծէ՞ք, Պ. Տէշան, որ մենք այն տեղ, այն ժպտաղեղ տնակները, այն մշակուած վայրերը պիտի տեսնենք զորս այնքան փայլուն նկարագրութիւնով մը կողմաք, յափշտակուած գաւառին սահմանին վրայ ծնրադրած: Եթէ ձեզի պէս ճարտար գրող մը ըլլայի, ձեզ համար պատկեր մը

կը գծէի այս տեղ որ ձեզի յաւերժական միջառննջի մը կը մատնէր, մոռցնել կուտար Ալիզաս և Լօրէն, աւելի լայն զաւազափար մը կը ներշնչէր ձեզ և փոխանակ եղբօր մը միայն խորհելու, ամենէն նուառացուցիչ անձնասիրութեամբ, ձեր ամբողջ եղբայրներուն մտածել կուտար ձեզ: Չպիտի կրնամ սակայն Սեւսեւերականութիւնները գըրջիւ ծայրը ամփոփուած, զիրար կը հրժշտիկեն այդ նեղ գրան մէջ ու զիրար կարգելեն, անձուկ տեղ մը հրկիզուելու ենթակալ բաղձութեան մը պէս:

Արեւն կայ իմ հայրենիքս, Պ. Տէշան, աւեր և մոխիր: Արեւան գետեր, որ փրփրալով և բողբոջելով անդադրում կը հոսին Հայաստանի սարերէն: Թարմ կեանքերու հոյզերն են անոնք, մանկան, կայտաւ երիտասարդին և սիրտատարփու գունաղեղ հայաղջկան արիւններն են իրար խառնուած: Այն զանգակատունները, գիւղին բարի ոգին, շատո՞նց լուած են՝ զիւզացիին մահուան զօրանջը աշձագանգելէ ետքը. և հունձքը ու եղեւինը զոր Ալիզասի մէջ ընդհանարելու բախլան ունիք, մոխիրով փոխանակուած են այս տեղ: Որովհետեւ մենք, պարսն, քաղաքակրթեալ ազգի մը ձեռքը չենք, որ միայն մեր նախնեաց քաղաքներուն անունները փոփոխելով բաւականապէս այլ զայլերու և բորենիներով զոհմակի մը, որոնց բերնին մէջ միշտ գիւղիկ մը ոսկորը պէտք է կրծելու համար, որոնք միշտ կարօտը ունին անհուն գերեզմաններու. թո՛ղ հոգեւարքներու սնարին վերեւ սաւառնող «ագուաները» . . . :

Չեր յափշտակուած հայրենիքին մէջ ճոխութիւն կը ընդհանարէք. և ձեր զգացումը շատ կը նմանի վարժամ կալուածատէրի մը զգացման, որ ձեռքէ ելած ընտիր տունի մը ետեւէն կողբայ: Հոնկէց՝ խինդի արձագանգներ ալ կը հասնին ձեզ. իսկ մեր հայրենիքը յուսահատութեան և անհուն խոցերու ցաւազին գոչն է որ կարճակէ, զոր չլսելու համար ականջներդ կը խփէք: Այդ տխուր խըմբերգը՝ կիներու, կոյսերու, անզէն տկարներու աղեկտուր ձայներէն բաղկացած է. ծովամոյժ կը լլայն և դուք ձեր ամբակուտ նաւերով օգնութեան չէք հասնիր ալիքներու վրայ ցանցնուած և տապալկող այդ ամբոխին . . . ու միայն ձեր Ալիսաը կը մտածէք:

Կը բողբոջէք անոնց գէմ որ ֆրանսայի անկուած կը հաշակեն կը փրփրաք երբ Լէօբաուտի բանաստեղծը «սեւ ու անդամ» մակդիրը կուտայ ձեր երկրին, և կուղէք որ միշտ Ռուսօի «հեղ և բարեացակամ աղբը» մնաք: Մեռան այն ժամանակները, պատ

րոն, այն ատենուան մեծ դէմ- քերուն հետ մէկտեպ. ու հիմակ- ուան գաճաճները իրենց հետ գաճաճ ժամանակ մը բերին քրանսախ մէջ և բուն դնել տը- լին հոն:

Երախտեօք կը յիշեմ թէ դուք և Ֆրանսացի հոյակապ գրագէտ- ներուն մեծ մասը, մօտիկ անց- եալի մէջ, հայկական տառա- պանքներուն վերջացումը սյա- հանջող հանրագիր մը ստորա- գրեցիք, որուն սակայն ո՛չ ոք կարեւորութիւն տուաւ: Կարծե- ցիք որ ձեր մարդասէրի և մեծ հոգիի պարտքը կատարած ե- ղաք այդ հանրագրով որ, թէև քրանսայի ամբողջ մտաւորական ուժին իզը կարտայայտէր, բայց անպէս քուրջի մը պէս նախա- րարութեան զամփիւլը նետուե- ցաւ:

Եթէ արդարեւ մեծ տեսնել կուզէք ձեր երկիրը, իր նախ- կին փայլին մէջ, աննկուն յա- րատեւութեամբ մը մեծ գործեր տեսնել տուէք անոր: Եւ փոխա- նակ եօկու հարիւր հազար կտրիճ զաւակներ կորսնցնողի մը առ- ջեւ պառաւ մամիկի մը մահը ող- բալու, ինչ որ զգայութեանէ ա- լելի իբրզգայութիւն է, գուք, իբրև քրանսախ ամենէն հարա- զատ զաւակներէն մէկը, ձեր նմաններուն հետ մէկ սեղ, ընդ- հանուր մարդկութեան տառա- պանքին սփոփման նուիրեցէք ձեր կարողութիւնները և հանճարը:

ԳԱՄԵՐ-ԱՐՇԱԽԻՐ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Յիշխակ, 3 Յուլիս

Արդէն հրատարակեցիք Աւագերէց Տ. Արիստակէս քահանայ Ռուսչուք- լանի մահը: Իր բոլոր թերութիւն- ներով հանգեծ—կորովի բացակա- յութեամբ և մտաւորական խեղճ պատրով—չար մէկը չէր և կը փա- փագէր Փ. Պոլսի ազգային գործերուն

ՎԱՐՎ-ՊԱՏՐԻՎՈՒԹԻՒՆ (24)

Ճիշդ է գործը անաջող կաւ. սա- կայն գործը լինելով հայի սրբազան սաճարում, ապացուցեց որ սարուկ հայը այնքան նւիրվել է յեղափո- խական գաղափարին և այնքան վարակվել այդ վեհ գաղափարով որ նոյն իսկ իրան համար դարերով պաշտելի սրբավայրում պատրաստ է պատճել իր գաւաճան հ գեւորակա- նին: Յեղափոխական գիտակցութեան այդ կենդանի օրինակը այնքան ազ- դու էր, որ եկեղեցում գտնված հա- ըրեւորութիւնները ոչ մի քայլ չարին հայ տերո- ըրտանի բունը, որը յանդգնել էր ի- րանց արժքի ժամին սուրբ սաճա- րում սպանելու փորձ անել եկեղեցու պաշտօնեանին: Այդ փորձի սարսափը այնքան մեծ եղաւ, որ կարծեմ Միհ- րան անուհով մի հայ ստիկան հրա- ժարվեց իր պաշտօնից: Այդ փորձը նախնին համոզեց որ հայ յեղափո-

քիչ շատ կանոնաւոր ընթացքին. կաշխատէր ալ, միայն թէ չէր ուզեր խնդիրներու խորը թափանցել, մեր- կութիւններ պարզել, աւազակներու որջերը քրքրել, խարբարներու դի- մակը վար տանել: Իր թոյլ մարդ, միշտ գործիք եղած էր մեծ-ազաներու ձեռք որք շատ անգամ փողոցային հերոսներու նման կը հայտնէին ի- րեն զէմ: Իր միւս թերութիւնը որ շատ աչքի կը զարկէր, թրքամոլու- թիւնն էր: Միշտ կը տեսակցէր թուր- քերու հետ և անոնց սրճարանը ի- րեն կեդրոնավայրը բրած էր, թէև շատ անգամ գիտողութիւններ եղած էին: Բնութեամբ խաղաղասէր, ա- մէն խնդրի անուշ տեղը կապելու հին քաղաքականութեան ջերմ պաշտպան ըլլալով հանգեծ, չէր ուզեր վնասել ազգին և իրեն յանձնուած ժողով- լուրդին, և ասիկայ հազուադէպ առաքինութիւն մը սեպելու է մեր ազգային շրջանակին մէջ: Վարդա- նանց աօնին օրը, մեծ-ազաներու հայտնութեանց և սպանալիքներու տարափին տակ, ընկճեցաւ արդէն սկարացած իր մարմին: Իր սեղ աթոճ բաց կը մնայ և կը վախճամ թէ Փ. Պոլսի թուրքաւոր միջոցորտին մէջ խարբայ մը միայն կրնայ գրաւել զայն:

Ազգային գործերու կատակերգու- թիւնը կը շարունակէ և չեմ գիտեր թէ մինչև երբ պիտի տեսէ: Ամէն օր նոր նոր տեսարաններ կը վայե- լենք: Գաղտնի հոգաբարձութիւնը հրաժարական տուած էր, բայց ան- դա՛ն երէն մէկը միայն իր հրաժարա- կան վերագրած էր հիւանդութեան, մինչդեռ միւսները յայտնած էին կա- սավարութեան թէ օտարական հա- յերու սպանալիքներու ճնշումին տակ կը հրաժարէին: Բնականաբար կատակարարութիւնը չէր կրնար ըն- դուխիլ այս վերջիններուն հրաժա- րականը. ասիկա իրենք ալ գիտէին: Հրաժարած մէկ անգամին տեղ թա- զապետութիւնը կը ձեռնարկէ նոր ընտրութեան: Մասնաւոր տպուած յայտարարութիւններ կը փակցուին ամբողջ քաղաքին մէջ: Որոշուած օրը կատակարարական պաշտօնեաներ կու- գան ընտրութեան հսկելու համար եկեղեցիներ մէջ, բայց միկ ընտրող կը ներկայանայ և պաշտօնեաները կը մեկնին մեծ ցատուով: Ժողովուրդը իր հետ խաղաղօրէն երուն ազուրդաս մը տուած էր:

խականները կատակ չեն անում, այլ գործում են որոշ ծրագրով և ուղ- դութեամբ: Նա Մուշեղից աւելի մեծ իրաւունքներ ստացաւ հայ յե- ղափոխականներին պատճելու համար և շարեց իր օտարականական բարդ մեքենան զլիւստոր գաւաղիւններին գտնելու համար: Այդ բոլորը մեզ ասիլ էր ողբերգում և մենք տեխնի- քաւարան ինչիկին սպանելու որո- շումը: Խաչիկը մեղադրվում էր Յահան- գիւլեանի ձերբակալման թէ գտա- պարտման պատճառով: Բացի դրա- նից մենք պատրաստութիւններ էինք տեսնում մի անձը ցոյցի համար: Մուրատ, Արճեան, Վառճեան և երբ նաքի տակ էինք սալիս Պոլսի բոլոր հայարանակ անկիւնները. և միայն ժողովներին էլ մասնակցում և եւ իմ ուժերիս չափով ողբերգում, համոզում մեզ հետ միացող և համակրող հայ երիտասարդներին. վտանգ և ոչ մի բան մեր աչքին չէր զարկւ: Գործի ծանրութիւնը զլիւստորայէս Մու-

նրկար ժամանակէ հետէ թողական ժողով չունինք: Ժամանակին գրուե- ցաւ երկարորէն թէ ի՛նչպէս անգոր- ծութեան մասնեցին նախորդ թա- ղական խորհուրդը և վարիչ ժողովը, որովհետեւ աասեւչորս տարիներէ հետէ ազգին զաւակները բարոյապէս և մտա որապէս մահացնող դասա- տուներուն բարեկամ չէին: Գասա- տուներուն ազգական-բարեկամ ջոջ ազաները ստոր արարքներու գիմե- ցին և իրենց զծած ընտրական և վարչական ծրագիրը բոլորովին ջնջե- ցին: Հիմա դարձած են հին գրու- թեան, և այդ գրութեամբ պիտի ընտրուի նոր թողական խորհուրդ մը և նորէն պիտի լուծուի նոր մե- քենայութիւններով, եթէ կրկին ուզէ մաքրել զպրոցը այս փառած դասա- տուներէն: Պատրաստուած է ընտրող- ներու խարդախութեան ցուցակ մը գոր կը կախեն միայն կրկն օրերը եր- կու ժամ՝ ժամերգութեան միջոցին և յետոյ կաներուութեան: Իրենց զաղափարներուն հակառակ կար- ծուած անձերու անունները անխնայ զուրս վտարուած են այս ցուցակին մէջէն: Այս խարդախութիւնները ե- րեւան հանելու համար, կարեւոր անձ մը կերթայ քահանային և կը պահանջէ ցուցակին մէկ օրինակը: Քահանան կը մերժէ ցուցակն իսկ ցոյց տալ: Մեր բարեկամը կը զիջէ ամէն տեսակ նախատիք քահանային վրայ. բայց ցուցակը տակաւին յանձնուած չէ:

Կատակերգութիւն մըն ալ ինք սնանկաբաժն հոգաբարձութիւնը, որ ժողովներ կընէ, պաշտօնապէս կը հրաժարեցնէ դասատուները, յետոյ կը զղջայ իր բրածին վրայ և վեր- ջապէս նորէն կուտայ իր որոշումը դասատուներուն շահին համար, այ- սինքն զանոնք վերստին սեպտեմբե- րին դպրոցական սեղաններուն շուրջ բազմեցնելու համար: 14,000 Քրան- քով խղճալի վարժարան մը կը պահ- ուի կոր բրածոյացած դասատուե- րու վարչութեան տակ, մինչդեռ 10 հազար Քր.ով կարելի է մանկավար- ժական նոր մեթոտներով վարժարան մը ունենալ Փ. Պոլսի մէջ: Իրաւ է թէ այն ասան այս դասատուները որք ազգականութեան և բարեկա- մութեան կապեր ունին ջոջ-ազանե- րու հետ, անօթի պիտի մնան: Շար- ժուլ և իր թղթակցիցը մեծ հակա- կրութեան առարկայ եղած են հոգա-

րատի, Արճեանի և Վառճեանի վրայ էր. կոմիտէի միւս անգամները պատիւ դեր էին կատարում: Մի օր Արճեանը յայտնեց որ գաւել է մի հայ երկաթագործ որ կարող է ուու- րեր և ուրիշ գործիքներ շինել, մի- այն մի համակրելի հոգեւորականի օրհնութիւն է ուղում: Մուրատը և և ւտիպված եղանք գնալ այդ հոգե- ւորականի մօտ և խնդրել նրանից մեր հնարագէտ ընկերոջը օրհնելու: Առաւօտեան ժամը երեքին գնացինք այդ սեւազրիւնի մօտ. նա մի քիչ նազ ու տուզ անելուց յետոյ կատա- րեց մեր խնդիրը: Երկրորդ թէ եր- րորդ օրը մեր բարեպաշտ յեղափո- խականը օրհնութիւնը ստացաւ և գործի սկսեց: Մի քանի օրից մի քանի ուուլը և և կրկնվէ ուուլներ էին պատրաստ- մի առաւօտ Արճեանը ժամի վեցին եկաւ ինձ վերցրեց և մենք գնա- ցինք այդ գէնքերը փորձելու: Հե- սեւանքը շատ աջող եղաւ. մեր ո- ղեւորութեանը չափ չը կար: Թշնա-

բարձութեան: Պաշտօնական գումա- րումի մը մէջ Շարժումի և անոր թղթակցին զէմ այնպիսի հայտնու- թիւններ կընեն որոս անպատեւ արի- կայ մը քիչ անգամ կարտասանէ: Բայց հոգ չէ, մեր նպատակն է ազա- սել ազգը պաշտօնի հետամուտ փա- տամոլ ապուշներէ և խարբարներէ: Բնական է որ հակակրութեան հան- ղիպինք մեր առաջին քայլերուն մէջ:

Կատակերգութեանց վախճանը չը գար: Ասոնցմէ է անշուշտ հոգաբար- ձութեան նշանաւոր նամակը «աս- կողմնակալ» Իրաւունքի մէջ որու քո- վանդակութիւնը ծանուցեր էիք: Այդ նիսած մարմինէն ուրիշ բան չէինք կրնար սպասել: Ուրիշ կատա- կերգութիւն մըն ալ փողոցային թերթին «քաջայաղթ» խմբագիրին ներկայութիւնն է Փ. Պոլսի. . . մեյխաններուն մէջ: Շատ ուրիշ բաներ կան գրելիք, բայց ժամա- նակ չունիմ: Առ այժմ այսչափ:

Թորակից

ՔՐՈՆԻԿ

—):—

Օրմանեան պատրիարքը քա- նի մը էֆէնտիներու ընկե- րակցութեամբ անցեալ ուրբաթ օր ազգ. հիւանդանոցը այցելել է քննութիւն մը կատարելով ան- ձամբ ստուգելու վերջերս պա- տահած յետին անբարոյականու- թեան դէպքերը: Եւ ստուգել է ալ: Արդարեւ քարշելի հիւան- դութիւն մը ճարակեր է կարդ մը սրբերու մէջ, կաղախանի արժանի քանի մը ախտավարակ և ճիւղ պաշտօնեանեւու զաղա- նութեամբ: Հիմակ կը մնայ այդ հրէշները պատճել և հիմնական կարգադրութիւններով իր ան- ուան համապատասխան դիւրքի վերածել այդ խնամքի հաստա- տութիւնը: Եկու տես որ ինա- մակալ տիկիները հրաժարե- ր են. և շնորքով հոգաբարձու- թիւն մը ընտրելը կամաց կա- մաց անհնարին կը զառնայ: Ա-

մու համար մենք պատրաստում էինք մի անեղ զէնք և բոլորովին ազատ էինք մեւ անխնայական տիպոսը կրելուց: Մենք այդ զէնքերը զլիւստորա- պէս գործ պէտք է զնէինք մեզ վրայ յարձակող զինուորների և պաշ- տօնեանների դէմ: Այդ ասումները պայթում էին սովորական վտանգով: Մեծ գնտակի մէջ տեղաւորվում էին յիսուսի չափ հրացանի կամ մեծ ա- տրըճանակի գնտակներ, ուղիղ հաս- ցանի սիստեմով. և պայթելու մի- ջոցին այդ գնտակները թռչում էին զանազան կողմեր: Այդ սիստեմը մեզ շատ դուր եկաւ, որովհետեւ միեւնոյն էր թէ մի ուուլ արձակե- լու փոխարէն յիսուս հրացան միա- սին արձակէինք: Միայն նշան առ- նել չէր կարելի. այլ գունդը պէտք էր նետել խմբված ամբոխի, աւելի ճիշդը զինուորների մէջ, ուրեմն նշանի էլ այնքան պէտք չը կար: Մի քանի հարիւր հատ պատուիրեցինք: (Շարունակելի)

հաւաստիկ հիւանդանոցին մէջ բարեկարգութիւններ մացնելու տարօրինակ և տխուր սկզբնաւորութիւն մը :

—Իզմիրի «Քուրբիէ տը Զմիւռն» լրագիրը ի պատիւ Ֆէրքէնի հետեւեալ տողերը կը նուիրէ .

«Այսօր սուտերու և զրպարտութեանց ենթակայ եղած է մեր էն «պատուաւոր» քաղաքացիներէն մէկը : Մեզմէ շատեր կը ճանչնան Ֆէրքէնը իբր պատուոյ տէր մարդ . և հիմա երբ պատկառելի տարիք մը ունի , ընտանեաց հայր է և եպիսկոպոս , իր վրայ կը ձգեն նողկալի ոճիւր մը , սուտ ամբաստանութիւն մը , ով գիտէ ինչ թագուն վրէժտ լուծելու համար : Արդէն Ֆէրքէն «դատ բացած է . . . .»

Կերեւակայէք «Քուրբիէ տը Զմիւռն» արգոյ խմբագրին կերպարանքը երբ այդ «պատուաւոր Ֆէրքէնը» (մեր քերթիւն պէս) հետեւեալ օրը շունչը Պերէն անննելով իր ոճիւր բողբոջին կապացուցանէ :

—Քահանայական աշխարհին մէջ ինք : Կը գուշակէք թէ լուրը շատ ուրախաւիթ գոյն չունենար : Գումգարու , գաւառացի մը դիմեր է տեղոյն քահանաներէն մէկուն խնդրելով որ իր մեռած մանկիկը թաղել յօժարի : Տէր հայրը 15 շրուշ կը պահանջէ . խեղճ հայրը 15 փըյ չունենալով կը մերժուի . լաց , աղաչանք օգուտ չընեն : Դժբախտ գաւառացին ճարահատած իր զակին դիակը զամբիւղի մը մէջ դրած , թեւը կանցընէ եւ Մայր-եկեղեցւոյ ժամկոչին կը դիմէ պաղատելով որ անձամբ տանի թաղէ : Կընդունի բարեսիրտ ժամկոչը և Պալլըբլըի գերեզմանատունը կը տանի զամբիւղը և պարունակութիւնը : Բարեբախտաբար այս տեղ պանդուխտ քահանայ մը կը գտնուի որ կը յօժարի ձրիաբար քանի մը աղօթքներ մուտալ այդ անմեղ մանկիկին հոգիին փրկութեանը համար . . . :

—Վանէն դուռած նամակ մը կը յայտնէ թէ Բագուէ և ուրիշ տեղերէ վերադարձող գաղթականները ողջամբ իրենց տեղը հասած են , թէ երկրի դրութիւնը լաւ է և հացի գինը զգալապէս իջած , և թէ առաջիկայ հունձքը բաւարար բերք կը խոստանայ :

ԴԵՍ ՈՒ ԴԵՆ

—)(—

Թուրքիոյ զինուորական հաստատութեանց համար կատարուած հանգանակութիւնը մինչեւ ցարդ մէկ միլիոն օսմ. ոսկիի յանգեր է : Այդ գումարը օսմ. պանգան դրուեր է և պիտի գործածուի միմիայն օսմ. բանակին և նաւատորմին պէտքերուն երբ

բրիտանացիք բնաշնչման գործը վերսկսուի : Կը յիշուի թէ արտասահմանի հայերուն մէջ ալ այս օգտակար հաստատութեանց նպատելու փառքէն չհրաժարողներ գտնուած են :

—Նոր որոշման մը համաձայն Կիպրոսի Նիքոսիա և Լիմասօլ քաղաքներուն օսմ. պանքայի ճիւղերը պիտի գոցուին , միայն Լարնաքայինը պիտի մնայ :

—Իզմիրի յոյն վաճառականներէն վախճանեալ Քիւբէճի օղլու 6,000 ոսկիի չափ գումար մը նուիրեր է քաղաքին այլ և այլ օգտակար հաստատութեանց : Կըսուի թէ մեր Գարակէօղեանները խորհուրդ տուեր են Քիւբէճի օղլուի ժառանգորդներուն , իրենց . . . պատուաբեր օրինակին հետեւելու :

—Սօֆիաի «Ջնամէ» լրագիրը , որ ռազմավարական կուսակցութեան կը պատկանէր , կառավարութեան կողմանէ գրաւուեր է երեք տարի տուրք վճարած չըլլալուն : «Ջնամէ»ին տեղ պիտի հրատարակուի «Բուէբօրէց» (Գրօշակ) :

—Բագուի Բէհէնտնի նաւթային գործարանը յունիս 24ին հրոյ ճարակ եղեր է մեծ մասով : Մարդու կորուստ չկայ :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ապստամբութիւն մը ծաղած է Չինաստանի մէջ և կերեւի թէ Բանթոնի նահանգին մէջ ապստամբները առաջ կը քալեն : Կայսերական զօրքերը սրբ անոնց դէմ զրկուած էին , կատարեալ պարտութիւն մը կրեր են Վուճօի մօտ : Այս տեղին քաղաքապետը լուր զրկեր է Բանթոն թէ կանոնաւոր զօրքերէ աւելի քան 1,500 մեռած կայ , և թէ եթէ օգնութեան զօրք չընդունի պիտի ստիպուի անձնատուր ըլլալ : Ապստամբութեան էն կարեւոր պարագլուխն է Սըն Եաթ Սէն , որ ծանօթ է Լոնտոնի մէջ չինական դեսպանատան կողմէ ձերբակալուելուն պարագայովը :

—Դուռը յիսուն նոր զօրք զըրկեր է Գանես : Ծովակալները թող չեն տար որ անոնք ցամաք ելլան :

—Սպանիա փութոյ պնդութեամբ առաջ կը տանի իր նաւահանգիստներուն ամրապնդման աշխատութիւնները : Կառավարութիւնը հրամայեր է մարել Մահօնի փարոսը :

—Չօլաի գատավարութեան պահուն ծագած միջադէպի մը առթիւ Պ. Բօլ Տէրուլէտի և Պ. Հիւպպարի միջև մեծամարտ մը սեղի ունեցեր է . Պ. Հիւպպար ձախ ձեռքով բռներ է Տէրուլէտին սուրը : Կախը ստովկերջացեր է :

—Վերայլի եղեւնադատ ատեանը հաստատուեր է Չօլաի և Բէ-

նէնի դէմ՝ Բարիլի գատարանին վճիռը :

—Ֆէրկանաի (Ռուսիա) ծանօթ ապստամբութեան 48 ամբաստանեալներէն 45ը կախաղանի դառապարտուեցան զինուորական տեղին վճռով : Յայտնի է թէ պարագլուխները արդէն իրենց յանցանքը քաւած են նոյն մահուան պատժով :

—Տաֆթը զօրավարը կը հեռագրէ թէ յուլիս 17ի առաւօտուն սպանիացիք մեկներ են Սանթիակօէ իբր պատերազմական գերիներ : Յետոյ , ամերիկեան դրօշը սկսեր է ծածանիլ Սանթիակօի վրայ : Պ. Մաք Բիլլի նախագահութեամբ գումարուած պատերազմական խորհուրդը որոշեր է թէ հարկ է հիմակ ալ յարձակիլ Բօնթօ-Ռիկօի վրայ , և Ռաթսըն հրամանատարը զըրկել Սպանիոյ ծովերը :

—Սանթիակօի անձնատուութեան պայմաններուն համեմատ , Սպանիական զօրախմբերը հայրենիք կը վերադարձուն Ամերիկացիներու ձեռքով : Սպաները իրենց զէնքերը կը պահեն : Կամաւորները պիտի արտօնուին Սանթիակօ մնալ , սա պայմանով որ զէնք չկրեն պատերազմի ամբողջ տեւողութեան աւերն : Կըսուի թէ ամերիկայի պատուիրակները իրենց կառավարութեանէն պիտի խնդրեն թողուլ Սպանիացի զօրաց հետերնին տանելու այն զէնքերը որոնցմով գիտցած են այնքան քաջաբար մարտնչիլ : Վերադարձող Սպանիացիք թիւը 24 հազարի կը հասնի :

—Հարիւր յիսուն անուկ ռազմամթերք պայթած է Բօնթօ-Ռիկօի մէջ , բաղմաթիւ թնդանօթաձիգներ մեռած և վիրաւորուած են :

—Սուլթանը հրամայեր է որ կայս. էրթոզուր հուշակաւոր պահակազունը Պաղեստին երթայ՝ պատուակալ պահակազօրքի պաշտօն կատարելու համար Վիլհէլմ կայսեր՝ անոր ամբողջ բնակութեանը միջոցին Ս. քաղաքին մէջ : Այս էրթոզուր գունդը կը բաղկանայ 600 զինուորներէ , որոնց կը հրամայէ կիսաբաժնի զօրավար մը , և իրու գնդապետներ և քառասուն սպայ :

—«Պրանքիուրթէր Չայթուրկ» կը ծանուցանէ թէ Վիլհէլմ կայսր հոկտ. 5ին Պոլիս պիտի երթայ և հոն հինգ օր մնալէ ետք Երուսաղէմ պիտի ուղեւորի : Գայղէրը Գահիբէ ալ պիտի երթայ 15 օր մնալու :

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

—)(—

Ս. Գ. Լոնան . — Արդէն սակեց առաջ գրած ենք թէ ամերիկայի բաժանորդները Մընի Օրտըրով դրամ զրկեն խմբագրութեանս :

Մ. Մ. Վաթըրթաուն . — Նոյնը :

—)(—

ՄԵՐ ԲԱՍԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

—)(—

Խմբագրութիւնս իր ջերմ շնորհակալիքը կը յայտնէ բոլոր այն պատ. բաժանորդներուն որոնք ինքնաբերաբար և առանց մեր հրաւերին սպասելու մինչեւ այսօր հետզհետէ իրենց բաժնեգինները զրկած են մեզ , և կը սիրէ յուսալ որ չվճարողներն ալ , մեր այս անդրանիկ զեկոյցը ստանալով , պիտի փութան անյայաղ իրենց փոքրիկ պարտքը վճարել , նամանաւանդ խորհելով թէ արդէն առաջին վեցամսեան մօտ է լրանալու :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ս. ՍԱՊԱԶ-ԳԻԿԵԱՆ

—)(—

ԵՒՐՈՊԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԲԵՐԼԻՆԻ ԳԱՇՆԱԴՐՈՒԹԻՒՆԻՑ ՅԵՏՈՑ

—)(—

ԳԻՆ Ե ՅՐԱՆԲ

Կը վաճառուի Եարժուսի խմբագրատունը :

ՍՏԵՓԱՆ ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ

Կ Ո Շ Կ Ա Կ Ա Ր

Մուսալա , հաճի Հասան աղաի օթէլին տակ

—)(—

Ճաշակաւոր , տոկոսն , ձեւաւոր կոչիկ շինել տալ ուղղը պէտք է դիմէ Պ. Ստեփան Խօրասանճեանի , որուն ճարտարութիւնը մէկ փորձով երեւան կելլայ :

Գինեք դիւրամատչելի :

ՃԱՇԱՐԱՆ ԵՒ ՉԲՕՍԱՐԱՆ

—)(—

ՀԱՃԻ ԲԱՆԱՔՈՒՆ ՃԻՇԴ ԴԵՄԸ Կը բանեցուցէ Պ. Տիգրան Թիւֆեկիւնեան և ընկիւր

Արհեստին մէջ կատարելութեան հասած երիտասարդ հայու մը ձեռամբ սարքուած այս հովասուն , մաքուր ու զեղջական հաստատութիւն ոչ միայն պատիւ կը բերէ հայ ճաշակին , այլ և մեծ խթան մը կը ըլլայ որ հայու օտար փափկակեղերն իրենց գարնանային ու ամառնային ժամադրվայր մը ընեն զայն զբօսնելու և ճաշելու , Պոնտոսեան ախորժակի հովերուն ու Սեւ ծովի կապոյտ սարածութեան առջեւ :

Հակառակ այս հրապուրիչ առաւելութիւններուն , յաճախորդները պիտի գտնեն յոյժ զուրամատչելի գինեք թէ բնակիչքի թէ կերակուրներու մօտին :

ԽՕՐԱՎՐՈՒԹԻՒՆ «ՇԱՐԺՈՒՄ»

—)(—

Կը սպաւորուին ամէն լեզուէ այցեւորն , հասցէտոմս , նամակակալուիս , հարսանեկան հրաւիրագիր , մահազդ , ինչպէս նաև պրօշիւռներ :

Գինեքն յոյժ դիւրամատչելի : Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրութեամբ և փութով կը կատարուին :

Печатница «Взаимность» Варш.